

ուստի եւ այլ եւ այլ բոլորով խոստացաւ իւր նամակագիր բաժանորդացը որ յառաջիկայ տարուան մէջ անոնց բաղձանքը կատարէ, *Փարիզեան ամսագիրը* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՐԺԱՆԻՍԿԻ փոխելով, յորում ոչ միայն ազգային օրագրաց մէջ ազգիս վերաբերեալ գլխաւոր նիւքերն ու տեղեկութիւնները ամփոփէ, այլ նաեւ մայրաքաղաքիս մէջ եւ ուրիշ տեղուանք պատահած էրեւելի ազգային դէպքերն՝ զոր իրեն հաղորդեն ազգասէր եղբարք՝ ի շինութիւն, ի գիտութիւն եւ յուրախութիւն հասարակաց :

ՊԱՆԵԱՆ Պ. ՅԱՐՈՒԹԻՒՆ : — Կլիշեն ընթերցողք որ Պալեան Պ. Յարութիւնը 1851ին Փարիզու մէջ վախճաններ (*Sheu Vassianag Akhavanjy Zattor* Գ. էջ 142) ու Փերլաշեզ ըստած գերեզմանոցը առժամանակեայ գերեզմանի մը մէջ լրացուած էր : Այս օրերս իւր հարազատը Մեծապատիւ Արիստոյմ Աղայն մայրաքաղաքս գալով, նոյն գերեզմանոցին մէջ յատուկ տապան զննեց, ննջեցելոյն նշխարները ամսոյն 23ին եկեղեցական հանդիսի հոն փոխադրել տուաւ, եւ հետեւալ օրը հոգւոյն հանգստեանը համար ազգային մատրանս մէջ սուրբ պատարագը մատուցաւ, հանդերձ ննջեցելոց պաշտօնիս : Այս տխուր ու սրտառուջ տեսարանին ներկայ էին բազումք ի հոգեսէր ազգայնոց, որոց սիրտը չէր կրնար չլարժիլ հանգուցելոյն ազնիւ կատարելութիւնները այսպէս վաղաճրաւ ու անարդիւն տեսնելով :

Ի խնդրոյ պատուական հարազատին, գերեզմանաքարին վրայ դրոսեցաւ հետեւեալ երկեզու պարզ տապանագիրը :

ԱՐՁԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՆԵԱՆՅ

ԾՆԵԱԼ Ի ՌՄԸԲ

ՄԵՌԱՆԵՐ Ի ՌՅ ՆՈՅԵՄԲԵՐ Ի

20 Հ ՏԱՍԱՆՅ ԱՄԱՅ ԱՆԻՈՆՁ ՎԱՍՏԱԿՈՅ

Ի ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆ ՓԱՐԻԶՈՒ

ՄԻՆՁ ՄԵՐՁ ԿԱՅՐ ՊՍԱԿԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՅ

A LA MÉMOIRE

DE PASCAL BAILLIAN

NÉ EN 1823

DÉCÉDÉ LE 20 NOVEMBRE 1851

APRÈS DIX ANNÉES D'ÉTUDES A LA FACULTÉ DE PARIS

VICTIME DE SON TRAVAIL OPINIÂTRE

AU MOMENT DE LE VOIR COURONNÉ

D'UN ENTIER SUCCÈS

ԳԱՐԲԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ : — Բնորոպուրկէն հետեւեալ խիստ բերկրաւոր եւ ազգօգուտ լուրերը կուտան մեզ :

« Գերապատիւ Տէր Գարրիէլ Այվազովսքի գիտնական վարդապետը՝ կայսերական հրովարտական որ ի 1 նոյեմբերի, Առաջնորդ անուանեցաւ երեք վիճակաց, Պեսարապիոյ, Նախիջեւանայ, եւ Խրիմուս :

« Նոյն ամսոյն 22ին բարձրապատիւ կայսերագուն Կոստանդիանոս Մեծ-Գլխին հետ տեսնուեցաւ եւ հետեւեալ օրը պատիւ ունեցաւ վեհափառ Կայսեր ներկայանալու. որ խիստ մարդասիրութեամբ եւ վեհանձնական սիրով ընդունելով զիշեալ շնորհափայլ վարդապետը, բարեհաճեցաւ մէկ ժամու չափ տեսնուիլ եւ առանձին խօսակցիլ անոր հետ, տեղեկութիւններ ստանալով զայլեւայլ ազգային իրաց, եւ կայսերական բարձր խնամքը եւ պաշտպանութիւնը յօժարամիտ յայտնելով վասն յառաջադիմութեան Հայոց ազգին, կրթութեան եւ ուսմանց օգտակար շահին մէջ :

« Գերապատիւ Տէր Գարրիէլ վարդապետը, կայսերական այս ունկնդրութենէն ետեւ, որ մեծ պատիւ կընէ քէ իրեն առանձինն եւ քէ բոլոր ազգիս ընդհանրապէս, տէրութեան ամեն գլխաւոր պաշտօնատարաց եւ մեծամեծաց հետ եւս տեսնուեցաւ ու բոլորէն ալ սիրալիր եւ յարգական ընդունելութիւն գտաւ : Յիշեալ գիտնական հոգեւոր հովիւը նոյեմբերի վերջերը մայրաքաղաքս մեկնելով Օտեսոս պիտի երթայ եւ անտի Գիշեւ, յարոս իւր առաջնորդական : Գիշեւէն եւս Խրիմ պիտի անցնի, ուր սուսումնարան մը եւ կղերիկոսարան մը պիտի հիմնադրէ. քանզի կայսերական հրաման ընդունած է ազատ ուսումնարան, կղերանոց եւ տպարան հաստատելու » :

Իւրաքանչիւր ազգասէր Հայ չկրնար անշուշտ առանց ներքին ուրախութիւն մը եւ մեծ մխիթարութիւն մը զգալու կարողալ վերոյիշեալ ազգօգուտ լուրերը. որոնք անտարակոյս նոր ու բարեյաջող ապագայի մը ապացոյցներ են Ռուսիոյ մեր հայազգի եղբարց համար :

Ուստի կը բարեմաղբմք ի բոլոր սրտէ, որ Վերին Նախախնամութիւնը բարեհաճի արդիւնաւոր ընելու գերապատիւ Տէր Գարրիէլ բարեխնամ Առաջնորդին ազգասիրական ջնաշխարհիկ ճգունքը. որոնց վրայ Աստուծոյ մատր և օրհնութիւնը ըլլալը ամեն մարդ կը տեսնէ եւ կը վկայէ :

Սիրելի է մեզ հաւատալ, քէ յիշեալ մեր ամենասիրելի բարեգութիւն սուրբ Հօրը այս նոր ու երեւելի կացութիւնը պիտի չզրկէ Թուրքաստանի հայկազուն ժողովուրդը իւր ազգասիրական զործունեայ խնամքէն եւ իւր բարեհաճակ դաստակերտը, Փարիզի Հայկազնական վարժարանը կըսեմք, իւր հայրական հոգատարութեանը եւ պաշտպանութեանը ներակայ պիտի ըլլայ միշտ. որով քաջայայտ եմք քէ օրըստօրէ ըստ ամենայն մասին յառաջադիմելով, մեծամեծ ծառայութիւններ պիտի մատուցանէ ընդհանուր ազգին եւ իւր հիմնադրին անունը պիտի անմահացընէ :

(ԱՐՇԱԼՈՅԱ.)

ՀԱՆՆԵԼՈՒԿ

Շարժուն փեղկով պատուհան,
երկու լուսոյ մէջ կեցած
Բաց է ու զոց ամեն վայրկեան :

Propriétaire-gérant : A. LACHAT

Ի ՓԱՐԻԶ, ՅԱՐԱՄԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ.

Typographie Arménienne ERNEST MEYER, 3, rue de l'abbaye, à Paris.